# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՉՔԻ ՊՐՈԹԵԶԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ՝ 19.01.2018 ԹՎԱԿԱՆԻ N «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/2-1-Ա» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ք. Երևան**

**«08» «02» 2018թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աչք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Գասպարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 19.01.2018թ. N «ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/2-1-Ա» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պայմանագրի Հավելված 1-ում «Ծառայության մատուցման ժամկետը**» սյունակը լրացնել «Ըստ շահառուների դիմելիության» բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

**2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

**3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածը կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3
Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011016723 ՀՎՀՀ 01506515
Աշխատակազմի ղեկավար
Ս. Գրիգորյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«Աչք» ՍՊԸ
հասցեն՝ ք. Երևան, Ֆուչիկի 30
Բանկի անվանումը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052222086261001 ՀՎՀՀ 01228968
տնօրեն Գ. Գասպարյան
(ստորագրություն)

Հավելված
«19» հունվարի 2018 թ. կնքված
«ԱՄՀՆ-ԲՄԾՁԲ-18/2-1-Ա» ծածկագրով պայմանագրի
Համաձայնագիր 1-ի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 51411120 | Աչքի պրոթեզ՝ պլաստմասե | | | 140000 | 210000 | 280000 | 350000 | 420000 | 490000 | 560000 | 630000 | 700000 | 700000 | **700000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ԿԱՏԱՐՈՂ**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՉՔԻ ՊՐՈԹԵԶԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԱՍՀՆ-ԲՄԾՁԲ-18/2-1-Ա**

ք. Երևան «19» հունվարի 2016 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Այք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աչքի պրոթեզավորման սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագրի խախտումն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 700000 (Յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը.

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար.

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժերը և տուգանքը հաշվարկվում և հավաքվում

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը.

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
հասցե՝ ք.Երևան, Կառավարական տուն 3
Բանկի անվանումը ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ՝ 900011016723
ՀՎՀՀ՝ 01506515

Աշխատակազմի ղեկավար
Ա.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Աէր» ՍՊԸ
ք. Երևան, Փուշկինի 30
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052222086261001
ՀՎՀՀ 01228968

տնօրեն
Գ. [illegible]

Հավելված N 1
« 19 » հունվարի 2018 թ. կնքված
« ԱՄՀՆ-ԲՄԾՁԲ 18/2 I Ա» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման առարկայի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը ** |
| 1 | 51411120 | Աչքի պրոթեզ՝ պլաստամասե | Ներկայացված է ստորև | հատ | 700000 | 10 | Ըստ Կատարողի կողմից ծառայության մատուցման հասցեի | |

* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:
** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պայմանագրով ժամկետը հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:
*** Ծառայությունները մատուցվում են ըստ շահառուների դիմելիության

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
## ԱՉՔԻ ՊՐՈԹԵԶՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում աչքի պրոթեզների տեղադրման ծառայությունները մատուցվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված կարգի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 04.02.2014թ. թիվ 19-Ա/1 հրամանի համաձայն և ստորև բերված ցուցանիշներին համապատասխան:

Ստորև բերված չափաբաժինների պատրաստման, նյութերը և տեխնոլոգիաները պետք է համապատասխանեն միջազգային կամ միջպետական կամ եվրոպական ստանդարտներին և ունենան այդ ստանդարտների համապատասխանության հավաստագիր կամ հայտարարագիր:

Որոշման համաձայն աչքի պրոթեզներ ստանալու իրավունք ունեցող անձանց /այսուհետ՝ շահառու/ տրամադրվում են՝

| Աչքի պրոթեզ | |
|---|---|
| Աչքի պրոթեզ՝ պլաստամասե - Չափաբաժին 1 | |
| Պարագայի պատրաստման և /կամ տրամադրման պայմանները | 1. Պատրաստման և տրամադրման առավելագույն ժամկետը՝<br><br>աչքի պլաստամասե պրոթեզ՝ 3 - 7 օր<br><br>2. Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական մոտեցմամբ<br><br>3. Շահառուին հանձնվում է վերջնական փորձարկումից և նրա համաձայնությունից հետո |

| | |
|---|---|
| պրոթեզի երկարությունը | 12-20մմ |
| պրոթեզի հաստությունը | 4-20մմ |
| պրոթեզի գույնը | ըստ դիմողի ցանկության |
| պրոթեզի ձևը | Շահառուի աչքի խոռոչին համապատասխան |
| պրոթեզի արտաքին մակերևույթը | առանց ներձմլվածքների, ճաքերի, քերծվածքների, բլրակների |
| **Անվտանգությունը** | պրոթեզի պատրաստման համար օգտագործվող նյութերը և դետալները պետք է լինեն հիգիենիկ և **չօգտագործված՝ հաշվի** առնելով շահառուի հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը: |
| **Աչքի պրոթեզներ** | |
| **Չափաբաժին 1**<br>Աչքի պրոթեզ՝ պլաստմասե | ատամնատեխնիկական պլաստմասսա |
| **Պարագայի տրամադրման ժամկետը** | մինչև 18 տարեկանը ներառյալ՝ մեկ տարի,<br>18 տարեկանից բարձր՝ երկու տարի |
| **Երաշխիքային ժամկետ** | մինչև 18 տարեկանը ներառյալ՝ երեք ամիս<br>18 տարեկանից բարձր՝ վեց ամիս |

***Աչքի պրոթեզավորումն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաստատված շահառուների ցուցակներով:***

**Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝**

1. Համապատասխան մասնագետի միջոցով կազմակերպել պրոթեզավորվող անձի /այսուհետ Շահառու/ աչքի զննումը և խնդիրներ չհայտնաբերելու դեպքում, կատարել պրոթեզավորումը (չափագրում, պրոթեզի պատրաստում և տեղադրում):
2. Զննման ժամանակ ակնախոռոչում խնդիրներ հայտնաբերվելու դեպքում, Շահառուին ուղղորդել ակնաբանի մոտ և պրոթեզավորումն իրականացնել լիակատար բուժումից հետո:
3. Առաջին անգամ պրոթեզավորվող Շահառուին, ակնախոռոչի ձևավորման նպատակով, տրամադրել ժամանակավոր պրոթեզ՝ եռամսյա ժամկետով, որից հետո պատրաստել հիմնական պրոթեզ:
4. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար լրացնել անձնական քարտ (էլեկտրոնային կամ թղթային եղանակով)՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման N 1 հավելվածի 39-42-րդ կետերի:
5. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.
6. Կազմակերպել շահառուներին աչքի պրոթեզի տրամադրման գործընթացը.
7. Իրեն դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և տեղադրման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ պատվիրատուից ստացած ձևաչափով:

8. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) տեխնիկական միջոցներ՝ համակարգչային տեխնիկա, շահառուներին ծառայություններ մատուցելու նպատակով անհրաժեշտ բժշկական սարքեր, սարքավորումներ և այլ օժանդակ միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները առանց կանխավճարի կատարելու հնարավորություն,

4) աշխատանքային ռեսուրսներ՝ ունենա համապատասխան մասնագետ՝ շահառուի կարիքին համարժեք աչքի պրոթեզ տրամադրելու համար.

5) համապատասխան շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու համար:

9. Իրեն դիմած շահառուին տրամադրել պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված գրավոր տեղեկատվություն հուշաթերթիկ՝ մատուցված ծառայության երաշխիքային սպասարկման, օգտագործման, պահպանման և անվտանգության կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ: Շահառուն հուշաթերթիկն ստանալու փաստը հավաստիացնում է անձնական գործում ստորագրելով:

10. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը: Արտագնա այցելությունների ժամանակ մարզերում մատուցած ծառայության վերաբերյալ Համակարգ մուտքագրումները կարող են իրականացվել արտագնա այցելությունների ավարտից հետո 2 օրվա ընթացքում՝ անձնական քարտում նշելով մարզից վերադառնալու և պարագայի փաստացի տրամադրման օրը:



ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

(ստորագրություն)

Հավելված N 2
« 19 » հունվարի 2018 թ. կնքված
« ԱՍՀՆ ԲՄԾՁԲ 18/2 1 Ա» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ըստ որի վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 51411120 | Ակնի պրոթեզ՝ պլաստմասսայե | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափը

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
«  »      20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| գտնվելու վայրը ________________ | գտնվելու վայրը ________________ |
| ՀՀ ________________________ | ՀՀ ________________________ |
| հվհհ ________________________ | հվհհ ________________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «            » 20    թ.

Պայմանագրի կողմը՝ Պայմանագրով սահմանված՝ ____ ________ ________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» ________ ____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ____
Պատվիրատուն՝ ի դեմս ________ ________ ________ ________ ________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս________ ________ ________ ________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «________ ________» 20 թ. կազմված գրավոր հայտը ներկայացված ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ հանձնեցին, սույն արձանագրությամբ հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ նկարագրությունը | Մատուցված ծառայությունների մատուցման ժամկետը: ըստ պայմանագրով նախատեսված ժամանակացույցի | փաստացի | Մատուցված ծառայությունների քանակը/ծավալը: ըստ պայմանագրով նախատեսված քանակի ծավալների չափ | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Կատարման և ժամկետ ըստ վճարման և ժամանակացույցի / |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ կողմի հաշիվ-ապրանքագիրը հանձնվում են սույն արձանագրությանը կից՝ մասը և կցվում է:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________ ________ | ____________ ____________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________ ____________ | ______ ____________ ______ |
| Ազգանուն, անուն | Ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«    »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և ________ -ի
(կազմակերպություն)

(այսուհետ՝ Կատարող) միջև 20   թ. _____ ______ -ին կնքված N ____ ______
(պայմանագրի կնքման ամսաթիվ) (պայմանագրի ծածկագիր)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20   թ. ______ -ին հանձնման ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
| --- | --- | --- |
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______ ______
ազգանուն, անուն
______ ______
ստորագրություն

**Ընդունեց**
[illegible] ներկայացուցիչ՝

______ ______
ազգանուն, անուն
______ ______
ստորագրություն